Պայմաններ և դրույթներ
«ԱԿՆ»-ի նկարագրման մրցույթ

«Ֆասթ բանկ» Փակ բաժնետիրական ընկերությունը հայտարարում է ԱԿՆ-ի նկարագրման մրցույթ ստորև նշված պայմաններով.

1. Մրցույթին կարող են մասնակցել.
    - 18 տարին լրացած ցանկացած գործունակ ֆիզիկական անձ:
2. Հայտին ներկայացվող պահանջներ.
    - Անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը,
    - Պորտֆել,
    - Սոցիալական կայքերի հղումները,
    - Էլեկտրոնային հասցե,
    - Հեռախոսահամար,
    - ԱԿՆ-ի նկարագրման նախագիծ,
    - Օգտագործման ենթակա նյութերի տեսակ և քանակ,
    - Նկարագրման վայրի վերաբերյալ տեղեկատվություն,
    - Համաձայնություն հայտատուի կողմից տրամադրված տեղեկատվության մշակման և օգտագործման վերաբերյալ,
    - Հայտարարություն ներկայացված տեղեկատվության հավաստիության վերաբերյալ:
3. Հայտերի ուսումնասիրության և հաստատման կարգը.
    - Հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո՝ 12 (տասներկու) օրվա ընթացքում Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով ուսումնասիրվում են հայտերը, և ընտրվում է հաղթող մասնակից:
    - Այն մասնակիցները, ովքեր վերը նշված ժամկետի ավարտից հետո 5 (հինգ) օրերի ընթացքում Բանկից հաղթող մասնակից ճանաչվելու վերաբերյալ ծանուցում չեն ստանում, վերջիններիս ներկայացված հայտը համարվում է մերժված:
4. Հաղթող մասնակցի հետ գործարար հարաբերությունների հաստատման կարգը.
    - Հայտերի ուսումնասիրության ժամկետի ավարտից հետո Բանկը մասնակցի էլ. հասցեին ուղարկում է ծանուցում (այսուհետ՝ Ծանուցում) վերջինիս հաղթող մասնակից ճանաչվելու վերաբերյալ,
    - Հաղթող մասնակցի կողմից Ծանուցումը ստանալուց հետո Բանկի digitalmarketing@fcc.am էլ. հասցեին հրաժարում չներկայացնելու դեպքում, վերջինս պարտավորվում է Բանկի հետ կնքել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր (այսուհետ Պայմանագիր):
5. Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի էական պայմաններ.
    - Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի արժեքը կազմում է նկարագրման համար օգտագործման ենթակա նյութերի արժեքը, որը վճարվում է Բանկի կողմից,
    - Ծառայությունը ենթակա է մատուցման Պայմանագրի կնքումից հետո՝ 60 (վաթսուն) օրվա ընթացքում,

- Բանկի պահանջով ծառայությունը կամ դրա մի մասը կարող է կատարավել Բանկի կողմից նշված հասցեում,
- «ԱԿՆ»-ի տեղափոխումը Երևան քաղաքում կատարվում է բանկի հաշվին։
- Ծառայությունների վճարովի մատուցման այլ պայմանները սահմանվում են պայմանագրով։